



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10633

10634

10635

10636

10637

10638

891.99

μ-26

10638

ՅՈՎՀ. ՇԱԻԱՐՇ

Մ Փ Ո Փ Ա Ն Ք



ԿՈՍՏԱՆՆՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. և ԳՆՄԱԳՐ. Գ. ՊԱՂՏԱՏԻՆՆԵՆ

Սուրբան համալ նստքոսի, քիւ 14.

1896


2013

ՅՈՎՀ. ՇԱԻԱՐՇ

ԱԿ

ՅՅԻ. ԳԳ

Մ Փ Ո Փ Ա Ն Ք




Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Սուրբան Համալ հասկերի, քիւ 14

1896



Ս Փ Ո Փ Ա Ն Բ

Ա.

Գարնանային երեկոյ մ'է բոցավառ,
Կ'անհետանան սակաւ շողերն արեւի.
Ամենայն ինչ լրուութեան մէջ վառ ի վառ
Փայլի, շողայ զի վերջալոյսն երեւի:

Մանրիկ ամպեր երկինքի վրայ ցիր եւ ցան
Բենեզ շապիկ ըզգեցած են ոսկեքել.
Միջօրէի սապ նըժոյլներն վա՛ղ անցան
Որ նեղէին գործաւորներն անընտել:

Վերէն երկինք պայծառափայլ շողոզայ՝
Ցոյց տալով մեզ սակաւ աստղերն ու լուսին,
Իսկ վարն ծովի ջրին մէջ արեւ կը լողայ՝
Վերջին անգամ ողջոյն տալով փառքին սին:

Լեռներ եւ ծով խորհրդաւոր տեսք մ'ունին
Վերջալուսին, լրութիւն, զըւարթ շարժումով.
Երկիրս բոյն մ'է ամբողջ ժրպփ ուր բունին
Վայելչութիւն, գեղ եւ շքանքն ի գորով:

Վ Ա Ղ Ա Մ Ե Ռ Ի Կ Բ Ր Ո Ղ Ս

Լ ՈՒ Ս Ի Ա Ս Ի Ի Չ Մ Է Ճ Ե Ա Ն Ի

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

7778.57

Ահա մեղմ սիւնն այ պարսէզէն քրոջելով
 Կը տարածէ անուշ բուրում աս եւ անդ,
 Մինչեւ այն մտակն, իւր բուրումէն հեշտին, զով,
 Որ ամբողջ օրն մըսակած է պարսէզ, անդ:

Հոյլ մանուկներ աշխոյժ, բերել կայտելով
 Երեկոյին մարգերու վրայ վազվրզեն՝
 Մերք խաղալով եւ մերք անուշ երգերով,
 Ռոնց ի դէտ կենան արծիւն ու բազէն:

Եւ կամ ոմանք խոտի մէջէն եռանդուն
 Ծաղիկ փայտն եւ փունջ կազմեն գեղեցիկ,
 Եւ ըստպով կը վազեն դէպ իրենց տուն՝
 Զօնել իրենց մօր կամ եղբոր այն փընջիկ:

Ճոխ մեծասունն իր պարսէզին մէջ սիրուն՝
 Կանաչի վրայ՝ յոյժ փառաւոր մի սեղան
 Կազմած է արդ ըստաստերով զարդարուն,
 Ուր ամէն ինչ առասուրբամբ կը տեղան:

Երևոյժ ունի. համադամներ, խորհիկներ,
 Պէս պէս միբեր կը յաշորդեն իբարու,
 Եւ լեցնելով բարձ գինիով բաժակներ՝
 Քամեն ցըմուր, լինին միմեանց օրհներգու:

Ընթրիքին մէջ երաժիշտներ այ ունին,
 Ռոնք նուագեն հոգեհրմայ խաղերով,
 Զուրակ, սրբինգ եւ սաւիղներ անքնին,
 Ռոնց զովես տեղայ ապած այն ժողով:

Դարձեալ սիրուն բաժակներ գան երեւան՝
 Լեցուն անուշ զըւարարար գինիով,
 Դարձեալ պէս պէս կերակուրներ կ'երեւան,
 Զոր շուայրութեամբ ուտեն, խրմեն անխրոով:

Քանի երգչին ախորժեյի ձայն լըսեն,
 Քանի միմեանց լըսեն աշխոյժ «կեցցէ» ներ,
 Անյագօրէն կ'ուտեն առաս սեղանէն
 Եւ խրախանան մինչեւ հասնի կէս գիշեր:

Բ.

Մարգի մէկ ծայրն լըռին, մենիկ մի հիւզակ,
 Որ եղէզով եւ ծրոզով է ծածկուած,
 Գարնան ժրպիտ մ'իսկ ցոյց չի տար համարձակ,
 Վասընզի արդ վիտերու բոյն մըն է ցած:

Հոն չի լըսուիր երբեք ձայն մը կենդանի,
 Քանզի ի սպառ մարած է սան շահն անեղջ,
 Այժմ կին մը խրդեճէկ ... այն ալ կը մեռնի ...
 Վերջին յո՛յսն է որ կը մարի այս սան մէջ:

Ո՛ր անգուր սիւր, այս խորհիքէն ներս միտի,
 Հոն վրոտակո՞ծ քըշուառ սիւրե՛ր կան նըւաղ,
 Եւ սովրէ քէ ամբողջ աշխարհս է պատիւ,
 Ուր ամէն ինչ վախճան գըտնեն ուշ կամ վաղ:

Հո՛ն կին մը կայ արդէն մահուան դուռն հասած,
 Մեռելադէմ, վրտիտ, անյոյս եւ անկար

Որ բազմավիճոս գլուխն արժուկին է յեցած ,
 Եւ օրհասին կըսպասէ նա դալկահար :

Հո՛ն կին մը կայ հուշերու մէջ փաթորւած ,
 Հո՛ն , խորհիքի անկիւնին մէջ ի գետին ,
 Եւ անկողին մ'իսկ չունի արդ , ո՛վ Ասուած ,
 Գետնասարած պիտի փրչէ շունչն յետին :

Հո՛ն , հիւանդին ի սնար կանգնած է սրտու
 Մասալ կոյս մի , գերդ հեծեակիկ երկնառափ ,
 Ամոռելու իր մօր վիճերն անհասնուի ,
 Եւ հանգչեցնել անոր գրլուխն վրեսահալ :

Փարած է այն անմեղ կուսիկ մօր վիզին ,
 Եւ համբոյրով ու արցունքով կը քրջէ
 Անոր ճակասն , անգոյն այտերն , եւ վերջին
 Կարօ՛ս կ'առնէ իր պարզ կեանքին հասիչէ :

— Մա՛յր իմ , քսէ՛ , կը մըմընջէ սիրալիր ,
 Ինչո՞ւ սանջուիս , քիչ մ'ալ ուրախ եղիր արդ ,
 Թէ կարօսիս բանի մ'ըսէ անձանձիւր ,
 Կը հոգամ ես , ինչո՞ւ դեղնին այտերդ վարդ :

— Ինչո՞ւ սակաւ կը նըւաղին քու աչեր ,
 Կարծես չուզեն տեսնել շողերն արեւի ,
 Ո՛հ , կը դռդաս , ի՞նչ ունիս , մա՛յր , մի ծածկեր ,
 Գո՛ւն ալ խամրիս պիտի նըման տերելի :

— Դուսր իմ սիրուն , հոգ մի ըներ ինձ համար ,
 Սըրբէ՛ աչերդ , ինչո՞ւ կուլաս թխրագին ,
 Ես միճոս քովդ եմ գրգուել ըզբեզ , մի՛ վախնար ,
 Դեռ լուսաւոր է արեգակն իմ կեանքին :

— Բայց կ'երկընչիմ , մայր , ահա ձայն մ'անձանօթ
 Կարծես ուժգին կը մըմընայ ականջէս .
 Լա՛ց , ո՛վ աղջիկ , միթէ չունի՞ս գուր , ամօթ ,
 Մայրդ կ'երթայ , դու հարագաս զուակ չե՞ս :

Մա՛յր իմ , խիղերս ներհուս կ'ըսէ . Ապիրա՛ս ,
 Ինչո՞ւ անզգայ մընաս այդպէս փայտացեալ ,
 Փոյք կը կընկէ մայրդ իր կենցաղն անարաս .
 Ի՞նչ պիտի՛ ընես , յայնժամ օգուս չունի լալ :

Ուսի , մայր իմ , խընդրեմ քսէ համարձակ .
 Երբ դու չըես այս անցաւոր աշխարհէ ,
 Ո՛վ սփոփէ պիտի ոգիս միայնակ ,
 Երբ շիւմիդ մօտ գամ եւ սրտիկս աշխարհէ :

— Որդեակ , հանգիս կաց այդ մասին , ազգական
 Շաս ունինք մենք , հարուս մարդիկ բարեւէր ,
 Երբ իմ մարմնիս կըսին յարեւ կենսական՝
 Անոնք նըպաս հայրայրեն քեզ անձնուէր :

— Ո՛չ մայր , անոնք ոչինչ կ'ընեն ինձ նըպաս ,
 Տե՛ս , անկողնիդ մօտ իսկ չեն գար տեսութան .
 Արդ՝ երբ դաժան մահը հասնի անըզգաս՝
 Ի՞նչ պիտի՛ ընեմ ես հոս անոք , անպաշտպան :

— Դուստր իմ, դու ժիր աշխատող մ'ես, լաւ գիտեմ,
Անուես հարուստ մարդիկ ըզեզ որդեգիր
Կ'ընեն իրենց. յայնժամ դուն ալ ծրպատեմ
Խաղաս, հրճուիս մոռնալով մայրդ ցաւակիր:

— Ո՛չ, մայրիկ, այդ ալ չեմ ուզեր ես բընաւ.
Թերեւս ծաղրեն կամ անգոսնեն զիս ընդ միտս:
Առանց եզգի իմ արես ալ մարեցաւ,
Զի չունիմ տեղ մ'որ դրնեմ գրուխս բազմամիտս:

— Սիրուն աղջիկս, եթէ այդ ալ չես ուզեր
Այժմէն յանձնեմ զեզ մարդերու որբախնամ,
Հո՛ն կը տեսնես եզգ պէս բազում որբիկներ,
Եւ անոնց հետ կ'ընկերանաս ինքնակամ:

— Բայց անըզգա՞յ կարծեցիր զիս, մայր սիրուն,
Միթէ կըրնամ մոռնալ ըզեզ, ապաւէն
Դեռ կ'երկմընի՞ս բուռքն սիրոյն իմ անհուն ...
Բայց կը խրնդրեմ, չեմ հեռանար ես տունէն:

Ուրեմն այսպէս անո՞ք պիտի մընամ աս,
Եւ չորս պատի մէջ տառապի՞մ միայնակ ...
Ա՛խ, մայր, ուրիշ՞ պիտի հարեմ իմ նրպաս.
Սովալըն՞ուկ զոհուիմ բախտէս անգիտակ:

Հազա՛ր անէժք այն սեւ օրին երբ որ ես
Եկայ աշխարհս այս վաղանցիկ եւ ունայն,
Ուր վարդի տեղ սրածայր փուռ կը գրտնես,
Եւ ուր չունի մարդ ասպարէզ յաջող, լայն:

— Դուստր իմ. ինչո՞ն կը վրտանաս անդադար,
Ինչո՞ն անէժք տեղաս նոյն իսկ տու անձին,
Միթէ գոն չե՞ս որ աշխարհիս մէջ ծընար,
Եւ հիմայ ալ գրտնես վիտակդ յար սրխիւն:

Բայց հոգ մ'ըներ, եթէ մարդիկ չի գըրան
Թրուառութեանդ եւ չողորմին եզգ երբեք,
Կայ Ողորմած մը կարեկիր մարդկութեան,
Որուն դուռներն բաց են ընդ միտս մարդուն հէք:

Թէ աղբիւրներն ալ ցամաքին տու առջեւ,
Նրբ պատակիս ջուր մ'իսկ տրուող չի լինի,
Դարձեալ հոգ չէ. պիտի տեսնես ակներես
Թէ գըրացող աջ մը կայ եզգ հովանի:

Եթէ երկիրն իսկ չի տայ եզգ իր բերէն,
Եւ սեւ խորակն անցնի սրտէդ մահատունջ,
Մի վախճար բնաւ. զի Կերակրողն Որէն
Կը կերակրէ եզգ պէս որբերն անտունջ:

Վրտէ, աղջիկս, կայ մի Ասուած զօրաւոր,
Որ ամենին քսեղծող Տէրն է արգար.
Նա կը գըրայ ամէն մարդու բաւ է որ
Պահեն իրեն պատուիրաններն դիւրասար:

Կայ մի Ասուած առաստձեռն, խեղճ աղջիկ,
Որ իր շնորհով մըխիբարէ վրտանար
Աղտաներըն, սըզաւորներն որբ, մենիկ.
Քեզ ալ կ'օգնէ՛ նա յարածամ, մի՛ վախճար:

Երբ հէ՛ք աղջիկն Ասուած անունն իմացաւ
 Կարծես եռաց մարմինին մէջ իր արիւն ,
 Համբուրեց մայրն եւ մոռացաւ վիճեւ եւ ցաւ .
 Յետոյ ինկաւ աղօթելու սիրտ յարիւն .

Ո՛վ Տէր , գրքա՛ր քրտուառիս ,
 Քաւ է անո՛ք սառապիմ .
 Չունիմ պաշտպան եղկելիս ,
 Ի՞նչ 'տի լինի վիճակն իմ
 Չոս աննիմ :

Մայր մը միայն ունէի
 Իմ ցաւերուս կարեկիր ,
 Այսօր այն ալ կը մեռնի
 Թողով ինձ լոկ յոյս պատիր
 Եւ մոխի՛ր

Ով Տէր , հայցեմ ես ի քէն ,
 Մի՛ լը՛քեր զիս միայնակ ,
 Եւ աշխարհի յորձանգէն
 Պաշտպանէ՛ զիս Աշիդ սակ
 Անապակ :

Արսասուագին կ'ապերեմ
 Սուրբ Աղդիիդ խաչին մերձ
 Ոտքս դրած ի Քո սեմ .
 Ո՛վ Տէր , լրսէ իմ ապերս ,
 Մե՛ծ է սէրս

Երէ հնար է , Տէր , շունչ սալ
 Իմ մօր նրւաղ կուրծքին սակ ,
 Մի՛ խընայեր . կամ շունչս ալ
 Առ եւ չըլլամ նահաւա՛կ
 Շարունակ :

.
 Երբ վերջին բառն արժասանեց առ Ասուած
 Դարձաւ իր մօր ուր տարածուած էր գեթին .
 Չունէ՛ր նա շունչ . . . այլ լոկ մարմին մը սառած . . .
 Յընդա՛ծ էին իր հառաչներն իսկ յեթին :

Ք .

Առաւօտեան լո՛ւռ է երկիր համայն ,
 Չի լըսուիր երբեք քրոջնի մ'երգի ձայն ,
 Ոչ միջատներու խօսկան բըզզիւն
 Որ խանգարէին այս խոր լըռութիւն :

Կը փայլի երկին իր պարզ կապոյտով
 Իրեն հայելի ունենալով ծով ,
 Եւ կը ցոլացնէ իր պատկերն լրսակ
 Ծովի ջուրերուն մէջ ջինջ , անապակ :

Ոչինչ արքրնցած է արդ սակաւին ,
 Մարդիկ ամենայն խոր քուն կը լինին
 Անփոյթ՝ թէ ո՛վ կայ իրենց քովն ու շուրջ ,
 Քանիներ սարսուան փաթըրած ի քուրջ :

Անփոյր քէ արդեօք քանի՛ քրեուաներ
Այս ամբողջ գիշերն անհուն անցուցեր
Են ողբ ու կոծով փրօուած գետնի վրայ,
Եւ որոնց վրօսին կարեկից չի կայ :

Սակայն մօսակայ գերեզմանասան
Պատերն հառաչի մ'արձագանգ կուտան ,
Այն սուր հառաչին որ քրեուա սրբի
Խորերէն կ'ելնէ եւ փոյր կը ցրեզի :

Եկէ՛ք , պարմաններ ու կոյսեր մասալ ,
Երբանք լըսելու այս սուգի նոր սալ .
Եւ մեր սիրտերէն գէթ շիք մ'արտատուք
Թող հոսի լըսին նոնեաց հետ ի սուգ :

♪.

Գիւղի մէկ ծայրն մեկուսացած
Նոնիներու մէջ առանձին
Կը տեսնուի դամբան մը ցած ...
Հոն ամփոփուած է հէք այրին :

Պարզ հողակոյտ մը դեռ խոնաւ ,
Անգարդ , անուր բոլորովին ,
Ուր կը հանգչի այժմիկ անցաւ
Թրբուառութեան լոյ մէկ գերին :

Ու ոստրու մէջէն լըսուի
Սրտանըմիկ ողբի մը ձայն ,
Որ խառնուած տունչին հովի
Յօրինէ սալ մ'եղերական :

Եւ դուրս կ'ելնէ հեծեծագին
Թաւ պուրակէն կոյս մը չըւառ
Ողբալու մահն իր մօրն անգին ,
Եւ հոն բողբու յոյսեր հազար :

Միջնահասակ եւ նըրբամէջ
Կոյս մը սիրուն բայց զուեասած ...
Աչերն բռնկած հուրով մ'անմէջ
Կը փայլէին արցունքով քաց :

Մագերն ուսին վրայ ձըգած
Իբրեւ ոգի մը ողբական
Ինկաւ շիւմին վրայ գետնամած ,
Եւ արձակեց նիչ ու կական :

Փետէր մագերն , ծեծէր իր լանջ ,
Համբոյր կուտար այն ցուրտ հողին ,
Եւ աղէխաբօ ու բարձրագանջ
Կը հառաչէր կողկողագին :

«Մա՛յր իմ , կ'ըսէր նա անդադար ,
Ինչո՞ւ միևակ բողբելով զիս
Աւխարհի մէջ ինկոյն քրաւ
Գիրկէս եւ այժմ հոս կը հանգչիս :»

Եւ մինչ այսպէս հէ՛ք աղջիկն այն
 Հոն կը քափէր արցունք աղի,
 Ու յուսաբեկ վագրի նրման
 Ձանար պատել սիրսն ու աղի,

Յանկարձ երկինք շրթեղափառ
 Ողորդեցաւ ծիրաներփեան,
 Եւ արեգակն ալ յուսավառ
 Ճառագայթեց հէ՛ք մարդկութեան .

Եւ շողերու մէջէն ելաւ
 Հրեցեակ մը սպիտակաքոյր,
 Որուն վրայ լոյսէ հաշաւ
 Մը ձրգուած էր զերդ ծիւն մաքուր :

Ճեղքեց անհունն այն օդային,
 Դէպ ի երկիր արացաւ մեղմիկ,
 Եւ մօտ գալով հէ՛ք աղջիկին
 Դիտեց զայն եւ ըսաւ յու՛րիկ .

— Թըռուա՛ն աղջիկ, ինչո՞ւ համար
 Կը հեծեծես սրբամառուք
 Մօրկանդ շիրմին վրայ 'նդազար,
 Եւ մի՛տ քափես ջերմ արտառուք :

Ինչո՞ւ համար կը բրոնես սուգ
 Տրբմաքայիծ ու վայրապար,
 Երբ չի անցնիր սրբիդ պատուք,
 Եւ երբ սեւ հողն քեզ ձայն չի տար :

Ելի՛ր, ելի՛ր, ո՛վ հէ՛ք աղջիկ,
 Մի՛ ալ երկար տառապիր հոս,
 Ձի անօգուտ է ամէն նիգ .
 Սըրբէ՛ արցունքդ այդ սիրահոս :

— Ի՞նչպէս չի լամ ու չի հեծեմ,
 Պատասխանեց կոյսը չըւառ,
 Երբ ես որք ու անտերունչ եմ,
 Եւ մարած է կեանքիս ջահն վառ :

Աւխարհիս մէջ ինձ պէս քրուառ
 Մի արարած կա՞յ՞ սակաւին,
 Որ գարունին հետ սիրավառ
 Դեռ չի ժրպսած կը՛րի հողին :

Ես այն կոկոնն եմ դեռ անբաց,
 Որուն բուփը արփիափայլ
 Ձի գեղերփնած ձրգուի ի բաց ...
 Եւ ըսկըսաւ դառնապէս լալ :

— Մի՛ լար այդպէս, ո՛վ անբախտ կոյս,
 Ինչո՞ւ համար կոծ ու սւխար . . .
 Ուշաբերէ՛, քիչ մ՛տա խախտոյս,
 Արդէն մի՛տի բոյն մ՛է՛ աւխարհ . . . :

Մայրիկդ հագիւ կըրցաւ զերծիլ
 Աւխարհային տառապանքէն,
 Որ կը խանձէր իր սրբին ծիլ ...
 Ու կը հիւժէր զինն ապաքէն :

Հիմայ անոր հոգին բերել
 Երկինքի մէջ երանելի
 Հրեշտակներու հետ թե ի թե
 Երբքի գանին տուր Անեղի :

Եթէ կ'ուզես փու հոգիդ ալ
 Տանիմ իսկոյն մայրիկիդ փոյլ .
 Հո՞ն լալու տեղ պէ՛տ է խընդալ
 Եւ վայելել սէր ու գորով :

Ե.

Ա՛ն , մայրիկի՛ս տար , ըսաւ կոյսն այն ատեն ,
 Ահա ընծայ կուտամ քեզի իմ հոգին . . .
 Հրեշտակն իսկոյն առաւ հոգին աղջիկէն
 Ու սրացա՛ւ թեթեաքովիչ դէպ երկին :



ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ

Կապ Բնար Գին 3 Գր.



Գին 1 Գր.

Մعارف عمومیہ نظارت جلیہ سنک فی ۲۳ مارت سنہ ۱۳۱۲ تاریخلو
و ۲۷ نوری رخصتنامه سبلہ طبع اولمشدر

9-20

